Պարույր Սևակ

Ութնյակներ

Մաս 2

11

Գողի հետ նա գառը աղում,
Տիրոջ հետ՝ իրեն է ճղում,
Գիշերը՝ լրբություն անում,
Ցերեկը՝ սրբություն խաղում:
Թե մեղուն աջ ոտքն է կծել՝
Ձախով էլ կաղում է այնպես,
Որ կարծեն՝ կռիվ էր մղում
Եվ հիմա... արյուն է հեղում:

12

Թե տեղը գա՝ այս մարդուկը
Հորն ուրանում՝ «որբանում» է,
Թե տեղը գա՝ լրբանում է,
Թե տեղը գա՝ սրբանում է:
Թե «կոմունիստ» կոչված բանից
Նա որևէ նշույլ ունի,
Այն էլ ոչ թե սրտում, գլխում,

Այլ - շա՛տ ափսոս - գրպանում է:

13

Ի՞նչ ասեմ խելքդ.
Ժամանակից շուտ մի խոսք ասացիր,
Քեզ, դրա համար,
Մեղավորների շարքը դասեցին:
Բա ո՞նց, մոռացա՞ր.
-Աքլորը կանչեց ժամանակից շուտ՝
Մորթեցին, կերան,
Հետն էլ մատները մի լա՛վ լիզեցին:

14

Հիսուն տարի առաջ ծնվեր՝
Նա կդառնար հաջող չարչի,
Բայց դե գիտի՝ չարչու դար չի:
Էհ, ի՞նչ անի, ինչի՞ց կառչի,-
Ու կարծիք է անվերջ ծախում,
Սակայն - ավա՛ղ - գնող չկա.
Դրանք քաղում է թերթերից,
Բաժանորդն էլ հիմար հո չի:

15

Լավից դժգոհ՝
Լավը թողեց, գտավ վատ,
Մետաքս ուզեց՝
Շալը թողեց, գտավ լաթ,
Ուզեց մեկից
Ե՛վ հաց, և՛ յուղ ունենալ,-

Ցորենի տեղ
Բռնեց ցանեց կտավիատ...

16

Ի՞նչ ես պահանջում
Այս խեղճ հայելուց,
Հո չես փոխվելու
Երկար նայելուց.
Եթե հագինըդ
Քուրջ է, ցնցոտի,
Քեզ ո՞նց հայելին
Ցույց տա վայելուչ:

17

Ուղտը չի տեսնում
Իր մեջքի կուզը,
Բամբակ է կարծում
Իրեն ընկույզը:
Այս ցավով նաև
Թվերն են հիվանդ.
Ծուռտիկ է հաշվում
«1»-ին «2»-ը:

18

Իմաստուն էր, բայց շատ ձգեց
Ու քաշքշեց այս պարանը,
Մոռանալով, որ պարան է -
Ճիշտ է, հաստ է, բայց գերա՞ն է:
Է՛հ, թող նույնիսկ գերա՛ն լինի,-

Միևնույն է, ո՛վ իմաստուն,
Պիտի հատվեր՝ թե պարան է,
Պիտի ջարդվեր՝ թե գերան է:

19

Ախ, ինչպես է, որ չի հոգնում
Նրա անփակ այս բերանը...
Նա ուրիշի շյուղն է տեսնում՝
Չհիշելով իր գերանը.
Ուրիշներին դեռ մածունից
Ու պանրից է քարոզ կարդում՝
Մոռանալով, որ այլևրս
Չի՛ մակարդում իր մերանը:

20

Դեռ ձմեռ չեկած՝
Նա ձյուն է ուզում,
Մի պուտ կաթ չկա՝
Մածուն է ուզում:
Ախր էլ ի՞նչ անի
Տնաքանդ թուխսը.
Ձվից ճուտ հանեց -
Դեռ ձուն է ուզում: